ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/8

ք. Սպիտակ «16» մարտի 2020թ.

Սպիտակ համայնքը, ի դեմս համայքնի ղեկավար Գագիկ Սահակյանի, (այսուհետ՝Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Անահիտ Գեվորգյանի, (այսուհետ՝Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշվածՏեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցինչհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իրհայեցողությամբսահմանելովանպատշաճորակի աշխատանքը պայմանագրինհամապատասխանող աշխատանքով անհատույցփոխարինմանողջամիտժամկետ կպահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվելպայմանագիրըկատարելուցևպահանջելվերադարձնելու աշխատանքի համարվճարվածգումարը և պահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը.

2.1.3 Միակողմանիլուծելպայմանագիրը, եթե Կատարողնէականորենխախտելէպայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրըխախտելնէականէհամարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքըկամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 3 800 000 (երեք միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

ՍույնպայմանագրովևսույնպայմանագրիհիմանվրակնքվածՀամաձայնագրերովպարտավորություններնամբողջությամբկամմասնակիորենչկատարելուհամարկողմերնազատվումենպատասխանատվությունից, եթեդաեղելէանհաղթահարելիուժիազդեցությանհետևանքով, որըծագելէսույնպայմանագիրըկնքելուցհետո, ևորըկողմերըչէինկարողկանխատեսելկամկանխարգելել:Այդպիսիիրավիճակներեններկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմականևարտակարգդրությունհայտարարելը, քաղաքականհուզումները, գործադուլները, հաղորդակցությանմիջոցներիաշխատանքիդադարեցումը, պետականմարմիններիակտերըևայլն, որոնքանհնարինենդարձնումսույնպայմանագրովպարտավորություններիկատարումը:Եթեարտակարգուժիազդեցությունըշարունակվումէ 3 (երեք) ամսիցավելի, ապակողմերիցյուրաքանչյուրնիրավունքունիլուծելպայմանագիրը՝այդմասինննախապեստեղյակպահելովմյուսկողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և նիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար:

Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարողեն կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝համաձայնագիրկնքելումիջոցով, որըկհանդիսանապայմանագրիանբաժանելիմասը:

հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6Աշխատանքի կատարմանժամկետըկարողէերկարածգվելմինչև պայմանագրով այդժամկետըլրանալը՝Կատարողիառաջարկությանառկայությանդեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուիմոտչիվերացելաշխատանքիօգտագործմանպահանջը, իսկԿատարողիառաջարկությունըներկայացվելէոչուշ, քանպայմանագրովիսկզբանեաշխատանքներիկատարմանհամարսահմանվածժամկետըլրանալուցառնվազն 5 օրացուցայինօրառաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարմանժամկետըկարողէերկարածգվելմեկանգամմինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրիկապակցությամբծագածվեճերըլուծվումենբանակցություններիմիջոցով:Համաձայնությունձեռքչբերել ուդեպքումվեճերըլուծվումեն ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրըկազմվածէ11էջից, կնքվումէերկուօրինակից, որոնքունենհավասարազորիրավաբանականուժ: Սույնպայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածներըհանդիսանումենպայմանագրիանբաժանելիմասը, յուրաքանչյուրկողմինտրվումէ պայմանագրիմեկօրինակ:

7.12ՍույնպայմանագրինկատմամբկիրառվումէՀայաստանի Հանրապետությանհրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Սպիտակ համայնք	Ա/Ձ Անահիտ Գեվորգյան
ք. Սպիտակ, Շահումյան 7	Ք. Գյումրի, Զարենցի փ. 3շ. բն 29
ՀՎՀՀ՝ 06801433	ՀՎՀՀ՝ 57348351
Հ/Հ՝ 900242308022	Հ/Հ՝15100429584700
ՀՀ ֆին. նախ. գործառն վարչ.	«Արարատբանկ» ԲԲԸ-ի «Գյումրի» 2 մ/ճ բանկ
Համայնքի ղեկավար՝ Գ.Սահակյան	Ա/Ձ Անահիտ Գեվորգյան տնօրեն՝ Ա.Գեվորգյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 16 » մարտի 2020թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/8 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսվածչափաբաժնիհամարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիրը	չափմանմիավորը	միավորգինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
1	71241200	Նախագծա նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	դրամ	3 800 000	3 800 000	1	ք. Սպիտակ, Շահումյան 7	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ոփյան, Չարենց, Շահումյան, Խնկոյան, Մուրացան, Սայաթ-Նովա փողոցների, Մյասնիկյան, Տեր-Սիմոնյան, Քըրք Քրքորյան փողոցների նրբանցքների, Ս.Ավետիսյան փողոցի 7-րդ նրբանցքի, Ալ.Մանուկյան 2-րդ նրբանցքի, Գործարանային, Օդկայան, Ուզբեկական, Գրիգոր Լուսավորիչ, Այգեստան 1, Այգեստան 2, Հարավ Արևմտյան, Իտալական, Շվեյցարական, Գերմանական, Առափնյա թաղամասերի փողոցայինլուսավորությանհամակարգերիև քաղաքային լոկալ օպտիկական ցանցի կառուցմաննախագծանախահաշվայինփաստաթղթերի ձեռքբերման

Նածագծանախահաշվային փաստաթղթերը մշակելիս առաջնորդվել.

1.ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ-ի No.128-Ն հրամանով հստատված ՀՀՇՆ 22-03-2017 ‹‹Արհեստական և բնական լուսավորում›› շինարարական նորմերով:

2.ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017թ.սեպտեմբերի 11-ի № 128-Ն հրամանով հաստատված՝ բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոններով:

3. ՀՀկառավարության 2011թ.հունիսի 23-ի 879-Նորոշման 8-րդհավելվածովհաստատվածշինարարականաշխատանքներիարժեքների հաշվարկման կարգով:

Ընտրված լուսատուները պետք է համապատասխանեն ՄՄ ՏԿ/004/2011 «Ցածրավոլտ սարքավորումների անվտանգության մասին» և ՄՄ ՏԿ/020/2011 «Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին:

Նախագծողը պետք է մոդելավորի լուսավորության սխեման և ընտրի լուսատուների պահանջվող և օպտիմալ լուսային հոսքի քանակը, բաշխման ձևը և ճանապարհի նկատմամբ տեղադրման դիրքը ու անկյունը և ըստ այդմ որոշի լուսավորության հենասյուների բարձրությունը և բռնակի պարամետրերը, լուսատուի հզորությունը և ամբողջական տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև հենասյուների միջև հեռավորությունը:

Նախագծիկազմինկատմամբպահանջներ.

- Բացատրագիր (տեղամասինկարագրի, քարտեզ, նախատեսվողշինարարական աշխատանքների կատարման համար պահանջվողլիցենզիայի,մեքենա-մեխանիզմներիևինժիներա-տեխնիկականմասնագիտականխմբիկազմերինշմամբ):
- Համահավաքամփոփագրեր,
- Նախահաշվիհիմանվրակազմվածծավալաթերթ-նախահաշիվ, որիյուրաքանչյուրաշխատանքիմիավորիարժեքըկներառի ՀՀ քաղաքաշինականնորմատիվփաստաթղթերովսահմանվածբոլործախսերը, շահույթը, ինչպեսնաևբոլորտուրքերը, վճարները և հարկերը:
- Ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացույցային գրաֆիկը (ժամանակացույցը)

Հիմնականակնկալվողարդյունք.
Առաջադրանքի վերջնական արդյունք է հանդիսանալու Ոփյան, Չարենց, Շահումյան, Խնկոյան, Մուրացան, Սայաթ-Նովա փողոցների, Մյասնիկյան, Տեր-Սիմոնյան, Քըրք Քրքորյան փողոցների նրբանցքների, Ս.Ավետիսյան փողոցի 7-րդ նրբանցքի, Ալ.Մանուկյան 2-րդ նրբանցքի, Գործարանային, Օդկայան, Ուզբեկական, Գրիգոր Լուսավորիչ, Այգեստան 1, Այգեստան 2, Հարավ Արևմտյան, Իտալական, Շվեյցարական, Գերմանական, Առափնյա թաղամասերի փողոցայինլուսավորությանհամակարգերիև քաղաքային լոկալ օպտիակական ցանցի կառուցման նախագծանախահաշվային փաթեթները՝ ներկայացված էլեկտրոնային կրիչներով (AutoCAD և PDF ձևաչափերով), և տպագիր (գունավոր)՝ **A3** ձևաչափի, **5** օրինակից: Նախահաշիվը և ծավալաթերթը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով (Excel ձևաչափով) և տպագիր՝ **A4** ձևաչափով **5** օրինակից:

Նախագծային ամբողջ փաթեթը պետք է պատրաստվի հայերեն և ռուսերեն լեզվով:

Աշխատանքների կատարման ժամանակացույցը.
Սկիզբը՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից
Ավարտը՝ 25 օրացուցային օր: Կատարողը ավարտված նախագծերի փաթեթները էլեկտրոնային եղանակով պատվիրատուին պետք է հանձնի պայմանագրի ստորագրման օրվանից ոչ ուշ քան 20 օրացուցային օր հետո: Պատվիրատուն 2 օրացուցային օրվա ընթացքում պետք է ներկայացնի իր դիտողությունները, որից հետո կատարողը պարտավոր է իրականացնել բոլոր ուղղումներն ու փոփոխությունները և ամբողջությամբ ավարտական տեսքով նախագծա նախահաշվային փաթեթները հանձնել պատվիրատուին/էլեկտրոնային և տպագիր տարբերակներով/ ոչ ուշ քան 3 օրացուցային օր հետո:
Նախագծային փաստաթղթերը պետք է կազմվեն համաձայն ստորև ներկայցվող աղյուսակի ըստ առանձին փողոցների և թաղամասերի տարածքների:
Գնային առաջարկները ներկայացնել ըստ փողոցների և թաղամասերի առանձնացված գնառաջարկով:
Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ընթացքում այն համաձայնեցնել Պատվիրատուի հետ:
Աշխատանքների դիմաց վճարումը կիրականացվի սահմանված կարգով փորձաքննության դրական եզրակացությանը ստանալուց հետո՝10 օրյա ժամկետում:

Նախագծերի տնօրինման իրավունքը պատկանում է Պատվիրատուին:

Ներկայացվող փաստաթղթերը՝
Կատարողը նշված աշխատանքների իրականացման համար հայտի փաթեթում պետք է ներկայացնի
1. Պետականգրանցմանվկայականիպատճեն
2. Քաղաքաշինականփաստաթղթերիհինժեներականբաժիններիմշակման
:ացառությամբկոնստրուկտորականմասի,
ինչպեսնաևշինարարությանթույլտվությունչպահանջողաշխատանքների) լիցենզիա,
ներդիրըբնակելիհասարակական,
արտադրականշենքերիուշինություններինախագծայինփաստաթղթերի՝էլեկտրամատակարարման,
էլեկտրալուսավորմաններքինևարտաքինցանցեր:

Լուսավորության համակարգերի և քաղաքային լոկալ օպտիակական ցանցի կառուցման ցանկալի տեխնիկական բնութագիր.

Լուսավորության ցանցի կառուցման տեսակը	Շարժմանգործիքները	Փողոցերթեմելիքները		Մալուխագծերի երկարությունը և ընդհանուր հզորությունը /մ/	Հենասյուներիտեղադրմանցանկալի տեղը և տեսքըճանապարհիմեկկամերկուկողմիցիրահիդիմացթեշախմատայինդասավորված	Հենասյուներիքանակը /տեսակը 108x4 սոսնձատախտակով/	Լուսատուների /Լուսատուներըպետք է ապահովենառնվազն 110 լյումենլուսարձակմանգործակից/		Միջոցներիսեփականատերը	Ճանապարհիկիրառելիությունը և նշումներ
		լայն /մ/	երկ. տար. /մ/				տեսակը	քանակը		
Շահումյանփողոց	երկգոտի	10-12	900	1,5-2	Հողիմակերևույթի 6մ (ընդհանուրբարձրությունը 9մ) բարձրությամբ, ալյումինեփոշիով ներկված (2 անգամ), տեղակայվածմիաշարքմիակողման իսխեմայով:	30	ԼԵԴ 100W	30	Վերստանումենմոտականերիսեփականատերերի միջոցներով	ՀՀՇՆ 22-03-2017 Արհեստական և բնական լուսավորումնորմերիևհամապատասխան, GOUS 2100607-2014 կանոններիհամաձայն
Ոփյանփողոց	երկգոտի	6	400	1,2	Հողիմակերևույթի 6մ (ընդհանուրբարձրությունը 6,8մ) բարձրությամբ, ալյումինեփոշիով ներկված (2 անգամ), տեղակայվածմիաշարքմիակողման իսխեմայով:	13	ԼԵԴ 70 W	13		
Զարենցփողոց	երկգոտի	8	400	-		13	ԼԵԴ 70 W	13		
Խնկոյանփողոց	երկգոտի	7-8	580	1,5		19	ԼԵԴ 70 W	19		
Մուրացանփողոց	երկգոտի	6-7,5	2720	-		90	ԼԵԴ 70 W	90		
Առափնյաթաղամաս	երկգոտի	6-8	1140	-		38	ԼԵԴ 70 W	38		
Մյասնիկյանփողոց	երկգոտի	7,5	1052	-		35	ԼԵԴ 70 W	35		
Տեր-Սիմոնյանփողոց	երկգոտի	6-7	2370	-		78	ԼԵԴ 70 W	78		
ՔՐՔՔՐՔորյանփողոց	երկգոտի	6-8	400	-		13	ԼԵԴ 70 W	13		
Ս.Ավետիսյան 7-րդ նրբանցք	երկգոտի	6-8	844	-		28	ԼԵԴ 70 W	28		
Գործարանային թաղամաս	երկգոտի	6-7	1126	-		37	ԼԵԴ 70 W	37		
Օդկայան թաղամաս	երկգոտի	6-6,5	500	-		16	ԼԵԴ 70 W	16		
Ուզբեկական թաղամաս	երկգոտի	6-6,5	2250	1,2-1,5		83	ԼԵԴ 70 W	83		
Գր.Լուսավորիչթաղամաս	երկգոտի	6-8	2290	-		76	ԼԵԴ 70 W	76		
Այգեստան 1 թաղամաս	երկգոտի	6-8	3350	-		111	ԼԵԴ 70 W	111		
Այգեստան 2 թաղամաս	երկգոտի	7-8	2170	-		72	ԼԵԴ 70 W	72		
ՀարավԱրևմտյանթաղամաս	երկգոտի	6-7	844	-		28	ԼԵԴ 70 W	28		
Իտալականթաղամաս	երկգոտի	7-8	1400	-		46	ԼԵԴ 70 W	58		
Շվեյցարական թաղամաս	երկգոտի	6-8	1900	1-1,5		63	ԼԵԴ 70 W	63		
Գերմանական թաղամաս	երկգոտի	5-8	580	-		27	ԼԵԴ 70 W	27		
Ալ.Մանուկյան 2-րդ նրբանցք	երկգոտի	5,5-6	247	-		8	ԼԵԴ 70 W	8		
Սայաթ-Նովափողոց	երկգոտի	6,5-7	580	-		11	ԼԵԴ 70 W	11		
Ընդամենը			27143			905		917		

Լուսավորության համակարգի 285 հենասյուների վրայով կանցկացվի AC7 (8,4,2) 9,7 կմ երկարությամբ օպտիկական մալուխ, կստեղծվի լոկալ օպտիկական ցանց հետևյալ պարամետրերով

Անվանումը		Չափ /մ/
Օպտիկականմալուխ AC7	8	650
Օպտիկականմալուխ AC7	4	3300
Օպտիկականմալուխ AC7	2	5700
Ամրակ AC	8	50
Ամրակ AC	4	220
Ամրակ AC	2	300
Անվանումը		Հատ
Upp		300
Lent/muft		12/17

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սպիտակ համայնք
ք. Սպիտակ, Շահումայն 7
ՀՎՀՀ՝ 06801433
Հ/Հ՝ 900242308022
ՀՀ ֆին. նախ. գործառն վարչ.
Համայնքի ղեկավար՝ Գ.Սահակյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Անահիտ Գևորգյան
Ք. Գյումրի, Զարենցի փ. 3շ. բն 29
ՀՎՀՀ՝ 57348351
Հ/Հ՝15100429584700
«Արարատբանկ» ԲԲԸ-ի «Գյումրի» 2 մ/ճ բանկ
Ա/Ձ Անահիտ Գևորգյան տնօրեն՝ Ա.Գևորգյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 16 » մարտի 2020թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/8 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Աշխատանքի															
հրավերովնախատեսվածչափաբաժնիհամարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը՝
1	71241200	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	0	0	0	3 800 000	3 800 000	3 800 000	3 800 000	3 800 000	3 800 000	3 800 000	3 800 000	3 800 000	3 800 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սպիտակ համայնք
ք. Սպիտակ, Շահումայն 7
ՀՎՀՀ՝ 06801433
Հ/Հ՝ 900242308022
ՀՀ ֆին. նախ. գործառն վարչ.
Համայնքի ղեկավար՝ Գ.Սահակյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Անահիտ Գեվորգյան
Ք. Գյումրի, Զարենցի փ. 32. բն 29
ՀՎՀՀ՝ 57348351
Հ/Հ՝15100429584700
«Արարատբանկ» ԲԲԸ-ի «Գյումրի» 2 մ/ճ բանկ
Ա/Ձ Անահիտ Գեվորգյան տնօրեն՝ Ա.Գեվորգյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԱՆԱՀԻՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ ANAHIT GEVORGYAN 57348351